

Ու մի՛շտ, մի՛շտ, անխո՛նջ կերպով,
անպատում մելամաղձութիւնը Յամբոյրին:

Ռեյմոն Պոյէեռ

Յըրայրքիս մէջ գիշերը զայն կ'երագեմ,
Շրթունքներըս պատրաստ իր մեղկ համբոյրին.
Բայց ժըխորին մէջ կը մոռնամ վերստին
Այն պահերն՝ ուր զայն սիրած եմ մոլեգին:

Ու կը մոռնամ ես նոպաներն ալ բոլոր.
Յորդ կիրքերու ժամերն ամէն ըղձածոր՝
Երբ կ'իյնամ ոտքն իր տեսիլքին՝ մինչեւ որ
Անշարժանամ պաղատանքիս մէջ մոլոր:

Ու չեմ յիշեր ցորեկն ասոնք, երբ խունկէ
Ա՛լ ակելի հեշտ բուրմունք մը մեղկօրօր
Իր ծըփանքին մէջ յոյզերըս կը լլկէ:

Այդ բուրումի եղկութիւնն, որ միշտ անկէ
Կը ծորի եւ կը պարուրէ զիս՝ բոլոր
Յոգիս անծիր մոգութեամբ մը կը խնկէ:

24. ԱՅԳԵՐԳ

Այգն է ծաղիկ երագով լի ու բալաձիգ՝ թեթեւօրէն.
Մըշուշն անծալ ջրվէժի պէս ամբարտակէն վար կը հոսի.
Իր չըփոյթին մէջ կը շիկնի ոսկի աղջիկն արշալոյսի,
Այգն է ծաղիկ երագով լի ու բալաձիգ՝ թեթեւօրէն:

Երկու բոցէ թելերու մէջ ծովանըկարն է սխրալի՛.
Եւ Կապոյտի՛ փառք ամրափակուած շրջագիծով ոսկեդրուագ, եւ
Ուր ցնծալից թեւճակներու հեշտերզն ունին կուր ու նաւակ.
Երկու բոցէ թելերու մէջ ծովանըկարն է սխրալի՛:

Պիտի ըմպե՛մ բոցն արեւին, ճառագայթի՛ եմ ծարաւի.
Պիտի ծըծեմ բոյրն առտըլան՝ հոգւոյս համար՝ որ հիւա՛նդ է.
Յոգւոյս համար՝ որ կ'երագէր գգուտ ու մեղմ շունչն հարաւի,
Պիտի ըմպե՛մ բոցն արեւին, ճառագայթի՛ եմ ծարաւի: